

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 Տր.
Վեցամսեայ 1.50 »
Կիւնիայի վճ. 1 Ֆել.
Իրանացի սուր տուրիսի
դրեանի համար 40 սուրիսի
k. իսկ վերջին երեսի համար
20 սուրիսի k. Երեւանի
անշի ակադեմիոն համար
20 Օղ զեղը կրչայ :

Վառնայի համար ձեռք 10 սուրիսի



ՄԱՐՓՈՒՆ

Վառնայի համար ձեռք 10 սուրիսի
Պուշկարիոյ համար ձեռք 10 սուրիսի
(20 ՍԱՆԹԻՄ)
(15 ՍԱՆԹԻՄ)

Արտասահմանի ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռք 10 սուրիսի
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԵՐ ՀՐԱՏԱՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԻՖԵՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՊ ԹԻՐԵՐ

ՃԻՅՄԱՆԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Այս օրվայ համարի մէջ այդ եպիսկոպոսի մասին հաղորդված լուրը անշուշտ շատ ծանր սպաւորութիւն պէտք է գործի հայ հասարակութեան վրա :

Եւ ինչպէս վատ չաղգէ, երբ մի բարձրաստիճան հայ եպիսկոպոս, հայկական կոտորածներէ դէմ բուն կերպով բողոքող հայ հոգեւորական յանկարծ այդպիսի մի ստոր քայլ է անում :

Բայց մենք չենք զարմանում և այնքան էլ չենք աղբվում. որովհետեւ գիտենք թէ Շիշմանեան եպիսկոպոսը նախքան կարեւր առաջնորդ լինելը, շատ էլ լաւ համբաւ չունէր :

Այդ էր պատճառը որ շատերը զարմացան երբ իմացան թէ Շիշմանեան կոտորածների դէմ խիստ կերպով բողոքել էր : Զրկարմացան միայն նրանք, ովքեր լաւ գիտէին թէ Շիշմանեան ինչ պատճառներից գրողված և ինչ տեսակ պարագաներում էր բողոքել :

Շիշմանեան այսօր այդ բողոքի բոլորովին հակառակ քայլն է անում. ինչպէս երեւում է նա համոզված է թէ իրեն լաւ մարդի գիմակ հագնելու ստիպող պարագաները վերացել են և կարող է ազատօրէն իր իսկական պատկերով երեւան գալ, գոնէ Սուլթանի առջեւ : Սուլթանի եմ ասում, որովհետեւ նա իր անձը Սուլթանին ծախում է գաղտնաբար, հայ ժողովրդից թաքցնելով :

Սուլթանը դեռ պատասխան չէ տել իր առջեւ քննող և իր հայրենիքը ու ազգը ծախող Շիշմանեան հայ եպիսկոպոսին. ինչպէս երեւում է չի համաձայնվում Շիշմանեանի գաղտնաբար ինքնավաճառման, այլ ուղում է այդ ցած առեւտուրը հրապարակաւ լինի :

Ճշմարիտ, Սուլթանը լաւ գիտէ ցած մարդկանց հետ խաղալ. նա հասկանում է թէ Շիշմանեանի մէջ աքսորից նեղվող հայ եպիսկոպոսը երբ ընդունակ է գաղտնա-

բար վաճառվել, ընդունակ կը լինի և հրապարակաւ անել նոյն քայլը :
Տեսնենք :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 23 Մարտ

Երբ շուն մը «ուռնայ» տան մը քովերը, երբ բու մը նստի առնի տանիքի վրայ և «վոյ» ընէ, երբ... եւ այլն—տգէտ ու խաւար ուսմական ուղեղը աս ամէնը կը վերագրէ չար «գինեւորուն և կեղքակացնէ, «ատ գէշ նշան է, դժբաղդութիւն մը պիտի ըլլայ, մարդ պիտի մեռնի» :

Համիտի ուղեղն այն աս տեսակ խնդիրներու մէջ ուսմի կոշտ ուղեղն ոչ միայն առաջ չէ, այլ և աւելի նախապաշարեալ է : Ուսմի կը «չար ոգիներ» ունի միայն. Համիտ և ատ ունի իր ուղեղին մէջ, ու հայ կոմիտէները և Մակեթոն կոմիտէները և Երուսաղեմի անարշիստները, և ժէօն թիւրքերը, և անձնական թշնամիները, և գահը ձեռքէն խլելու ջանացող միսքիները... և... և... :

Պայրամի առաջին օրն էր, Համիտ իջած էր Տօլմա-Պախէի պալատը շնորհաւորութիւններ ընդունելու : Աւաղակ կառավարութեան ամէն մեծամեծներ լեցուած էին պալատի հսկայական դահլիճը մարդարէի փոխանորդի փէշերը համբուրելու : Բաւականաչափ Երուսաղեմի ալ լեցուած էին կայսերական գահին գիմացը բարձր պատշգամբի վրայ և կը գիտէին ատ արեւելեան ուսուցիչի ձէսը :

Համիտ բազմած էր ոսկեկուռ «թախտի» վրայ, իսկ անոր երկու կողմէն կխաբողոր կերպով շարուած էին մեծ ու փոքր աւաղակ աւագանիները — համաձայն իրենց աստիճանի : Փառաւոր «պիւֆէ» մը պատրաստուած էր գորակներու վրայ, ատիճանաբար իրարմէ վեր շարուած. Երուսաղեմի հրաշագեղ նուագախումբը կը հնչէր արեւելքի

մեղկացուցիչ վայնասուն—մեղեգիները :

Հանդէսն սկսուեցաւ. նախ աւաղակներ կիսաշրջանի աւաղանիք մօտեցան խալիֆին, ծուռկի եկան մէկ—մէկ և համբուրեցին խալիֆի պետի վերարկուն քղանցքները : Այլաւորման բոլորը լմնցաւ և Համիտ իր ժահրագոյն դէմքը զարցուց ձախակողմեան կիսաւ շրջանին. բայց հազիւ առաջին աւաղակը ծուռկի գալ կը պատրաստուէր, երբ հահելի ցնցում մը, ստորերկրեայ «լըժ, զըժ, զըժ» ժխոր մը սկսուեցաւ, որ ճեպնթայ գնացքի մը պէս ծովու կողմէն եկաւ և դէպի Երուսաղեմ ուղղութեամբ մեկնեցաւ : Յանկարծ բարձրեկան ճեպնթայ նուագախումբը և անոնց նոթաներու փայտերը ու գործիքները սկսեցին արբած զինուորներու պէս իրար զարնուիլ : Պիւֆէին անօթները ու շիշերը «չախկ—չուխկով» գետին տապալուեցան, իսպանական դեսպան խոշորկեկ Գամբուսակրատօն շրջեցաւ սիրունիկ դրացուհիին վրան : Դահլիճի առաստաղին փառահեղ գածէ, ոսկեղօծ ուսուցիչ ամէն զարդերը սկսեցին ճաթութեամբ վար թափուիլ, խոշոր կտոր մը ինկաւ ուսուական նաւային կցորդի — արկին. Բէթրովի վրայ, կիսը կիսուշաթափ դուրս տարին, խել մը մանրիկ գածեր ինկան Համիտի վրայ, ճերմակցուցին : Ու այս ամէնը վայրկեանաբար... «վոյ կեափուր հայեր, հոս ալ խառնեցիք» մոմուաց Համիտ դեռ չի հասկնալով որ քոմիթէի պատիժը չէ, այլ երկրաշարժ : Ամէն գրանիկները ու թրքական քաջ զօրապետները գունատուեցան և փախչող փախչողի եղաւ. ամէնքը կը մտածէին իրենց զաւիր կեանքը ազատել և ոչ ոք, բացարձակ ոչ ոք կը հողար Համիտի, իրենց տիրոջ համար : Պոմպաէ, ուսմը է, արիւմիտ է—կը մտածէին ամէնն ալ ու մոկերու պէս ծակեր կորնէին փախելու, ազատելու համար : Համիտ ճեպի—ճերմկացաւ, գողգողալով ելաւ տեղէն և փախաւ. իսկ Պահանգէտային

գահաժառանգը մեռել կտրած, կիսուշաթափ մնաց աթոռին վրայ : Հարամ եղաւ ծէսն ալ, հանդէսն ալ, ընդունելութիւնն ալ : Ամէն ինչ լմնցաւ :

Այժմ ընթերցող, ինծի համար և աս գրութիւնս կարգալէն ետքը թերեւս ձեզի համար ալ, որչափ ծաղրելի և զղուելի պիտի երեւայ գերման կայսեր ապուշ հեռագիրը իր մտերիմ Համիտին շրկած, «ղմայլեցայ ձեր պաղաւրիւն քաջութեանը վրայ... կաղթեմ որ Աստուած ձեր թանկագին կեանքը երկարէ»... :

ԲԱԺ

(Շարունակելի)

Ֆիլիպէ, 24 Մարտ

Երբ թերթ մը յեղափոխութիւն կը քարոզէ, երբ անհատ մը յեղափոխական է, (յեղափոխական կուսակցութիւն կամ անհատ ըսելով, սկիզբէն մինչեւ հիմա, Դաշնակցականները կակնարկուի, ինչ որ մեզի համար շատ օւրախաբար է) անանկ կը կարծեն կարգ մը սկայաւորներ թէ այլեւս ազգային անհատ ըլլալէ կը զազրի եւ իրաւունք չունի իր ազգին կամ քաղաքին կրթական, եկեղեցական խնդիրներով զբաղելու եւ ատ մասին իր ունեցած համոզումները հրապարակելու : Ու ճիշդ աս բանին համար է որ Շարժումի եւ անոր թշնամիներուն մարակները՝ ատ շարժում—ապուշներուն ճիշդ հիւանդ տեղին կը զարնէ եւ զանոնք կը խրտճեցնէ միշտ : Սակայն անոնք ամէն իրաւացի գրուածք խճրճելու, խեղճութեամբ կաշխատին հաշիւներն շտկելու համար :

Աս կերպով կարելի է բացատրել Շարժումի մէջ ժամանակէ մը ի վեր եկեղեցական կամ թաղական խնդիրներու շուրջը զարձող թղթակցութիւններու ընդհատումը : Եւ շատ լաւ մտածած են Շարժումի թղթակցութիւնները : Երկու երեք տարիներէ ի վեր շատ բան գրուեցաւ Պուլկարիոյ հայոց վիճակային գործերուն վրայ, բայց շատ, խիստ շատ քիչ փոփոխութիւն առաջ եկաւ : Եւ քանի որ ատ այդպէս է, կարծիք որ Շարժումի սիւնակները զոհուի անոնց, երբ անդին, Պուլկարի թերթերն ալ կրնան ատ խնդիրներով զբաղիլ :

Բայց Շարժումի խիստ քիչ անգամ ըրած կարճ գիտողութիւններն ալ «հաշիւ ունեցող»ներու գործին չգար եղեր, եւ անոնք, խճրճելու մարմալէն թոնոտած, աս տողերն ալ կը խճրճեն եւ կուղեն որ գոյուցիւն

չունենան անոնք. մէկ խօսքով,
կուզեն որ, այսինչ անդամներն,
ինչ հովիւն մասին զգոհութեան
բառ մը անգամ չարտասանուի,
որպէս զի... ան շարունակէ իր շահա-
տակութիւնները. մնա ի վնաս վար-
ժարաններուն ու եկեղեցիին եւ ի հա-
շի մասնաւորներուն...

Աստուծոյ տրուած յայտնի պատ-
ճասներով, ինչպէս ըսի, ընդհատուած
չըլլար «տէրաբարկան» ինչորեքու
չուրջը դարձող թղթակցութիւննե-
րուն շարքերը, թերեւս մինչեւ հիմա
քանի մը անգամներով պարզած ըլ-
լայի թէ՛ ինչու օգտակար չկրնար
ըլլալ ու չէ եղած այցելու հովիւր:
Անչափ միայն ըսեմ որ, անկից գեր-
նական հրաշքներ կամ անկարելի
չէր պահանջեր պուրկարահայր, անոր
բռնելիք ճամբան շատ որոշ եւ դիւ-
րին էր—փոխանակ չորսորդներուն
ձեռքը զործիք ըլլալու. իր ապիկա-
րութեամբ զօրծերը կնճոտելու եւ
յետադիմութեան մատնելու, ան
պարտաւոր էր զանոնք բարեխաւս,
զեղծում... գործող քահանաները
չքաջալերելու եւ այն:

Ու աս յետադիմական քայլերն ու
անոնց պատճառները հրատարակելը—
բան մը որ Շարժումը չէ ալ ըրտմ—
կուսակցամտութիւն է՛:

Այցելու հովիւր պաշտպանելու մէջ
չան ունեցողները, որոնք անոր գոր-
ծունէութիւնը քննադատողները կու-
սակցամու կանուանեն—մանաւանդ
հիմա, ուր ոչ մէկ Գաղտնիկական
եկեղեցական զործերուն շուրջը մի-
ջամտել—կը հարցնեմ, ինչ անուն
պիտի տան այն քանի մը տեղադի-
ւորներն, որոնք առաջին հակառա-
կորդներէն են այցելու հովիւին ա-
նոր ապիկարութեան համար, եւ ո-
րոնք սակայն, տարիներով Թիւրքի
ազգային զործերը վարած են ու իբր
լաւ մարդիկ յարգուած—անոնք ալ
արդեօք յեղափոխական կուսակցա-
կան են:

Քաղաքիս Տիկնանց Որբախնամը—
հիմա միայն տիկնանց ճիւղը գոյու-
թիւն ունի եւ գրեթէ նախանձեղի
վիճակի մը հասնելու վրայ է: Աս

Որբախնամը հիմնուած ատեն նպա-
տակ ունէր զրամ հաւաքել, յանձնել
արական ճիւղին եւ առանց Պատ-
րիարքարանի գիտութեան զրկել չեմ
զիտեր ո՞ւր... Եթէ մէկ կողմէն
ուրախալի է որ ասանկ կարեւոր եւ
օգտակար գործ մը—որ էն լաւ կը
յարմարի իզակաւ սեռին—ունեցաւ
իր բազմացուած կազմը, միւս կողմէ,
կրկնակի միւլթարական է, որ խեղճ
որբիկներուն գրամը ազատեցաւ կր-
տուելու... վտանգէն, եւ այսօր աս
գրամը ուղղակի Պատրիարքարան կը
զրկուի: Թիւրքի Որբախնամը, ինչ-
պէս որ իր առած գործնական քայլէն
կը անսնանք, սկզբունքով ընդու-
նած է իր հաւաքած գրամներուն հա-
շիւը ներկայացնել հայ հասարակու-
թեան, ինչպէս կրնէ քաղաքիս Աղ-
քատախնամը: Ու այս բոլոր գովելի
բարեփոխումները կը պարտինք—
համեստութեան զէմ թող չըլլայ
խոստովանիլը—Շարժումի անկեղծ եւ
իրաւացի քննադատութիւններուն:

Աւելորդ չըլլար կարծեմ հոս դի-
տել տալ որ, նախկին Որբախնամէն
մնացած փշրանք մը Տիկնանց Որբա-
խնամին ընկալագրերուն վրայ կը
մնայ, որուն ջնջումն ալ շատ նպա-
տակալարմար պիտի ըլլար, եւ Գանի
որ Թիւրքի Որբախնամին հաւաքած
գրամը ուղղակի Պատրիարքարան կը
զրկուի, եւ ան կը բաժնէ Հայաստանի
բոլոր որբերուն, հակասական չըլ-
լա՞ր Որբախնամին անունը կապել
Հայաստանի մէկ նահանգին անունին
հետ, ինչու չանուանել Հայաստանի
Որբախնամ որ ամէն հայու սրտին
հաւասարապէս մօտ անունն է:

Վրասիաց Եզրայրութեանը նոր
վարչութեան մասին, իր ատենին
գրուեցաւ Շարժումին: Նոր վարչու-
թիւնը գործի սկսելուն պէս, ինչ-
պէս որ կը տեղեկանանք, իր սոսա-
նին գործը բրած է պատրաստի գրամ-
ները յանձնել պուրկարական ազգա-
յին պանդան, գանձելով իր բոլոր
սովորով գրամները, ինչպէս որ կը
տրամադրէ անոր կանոնադրին 10րդ
յօդուածը:

Աս տարուան վարչութիւնը սա-
կայն, ուրիշ բաւական կնճոտ ու-
ճանք զրուցեան մը մէջ կը գտնուի:
Ընդհանուր ժողովը նկատողութեան
առնելով որ, Ընթերցարանի շէնքին
անյարմարութեան համար, երբէք
ընթերցող չգար եւ եկած թերթե-
րուն մեծ մասը նոյնութեամբ ծալ-

լուելով տեղը կը դրուին, սկզբուն-
քով ընդունեց անպատշաճ քաղաքին
կեդրոն մէկ տեղը գտնուող յարմար
չէնքի մը մէջ փոխադրուիլ եւ տրա-
մադրեց ատ շէնքին համար իբր
վարձք 20—25 լէվ: Խնդիրը հոն է
որ, ընթերցարանի յարմար կեդրոն
տեղ մը այնքան զրամով անկարելի
է շէնք մը վարձել, իսկ ուրիշ տեղ
մը փոխադրուիլ հիմակուան շէնքին
մէջ մնալէն ալ սուելի անյարմար
պիտի ըլլար: Նոր տարիին սկսած,
մէկ երկու խմբագրութիւններ դադ-
րեցուցած են իրենց թերթերը, ներ-
կայ վարչութեանն պատասխան մը
չառնելուն համար: Եթէ ընթերցա-
րանը աս անյարմար շէնքին մէջ
մնայ, վարչութեան անդամները ա-
ւելորդ կը գտնեն թերթի գրամ վճա-
րել, քանի որ կարգացող չկայ: ա-
ւելի նպատակալարմար կը գտնեն,
աս այժմ, մինչեւ որ յարմար շէնք
մը յաջողին գտնել, աւելի ուժ տալ
մատենագրանին, զայն ճոխացնել
կազմուելի գրքերով, որովհետեւ
գիրք անողնեցու թիւը ընթերցա-
րան յամախոզներու թիւէն աւելի
չատ է:

Կը մտածեմ թէ՛ արդեօք քաղաքիս
հարուստ վաճառականներն մէկ քա-
նին, չնն կրնար, եթէ ուզեն,
չէնքի մը համար տրամադրուած ամ-
սական 20—25 ֆրանք վրայ աւել-
ցնել մասնաւոր գումար մը, եւ Գրա-
սիրաց Եզրայրութեան ու անոր ըն-
թերցարանին պէս կարեւոր ընկե-
րու թիւն մը օգտակար դարձնել Թի-
ւրքի հայ հասարակութեան, մաս-
նաւորապէս պատմութեան ազգայիննե-
րու, որով շատ գովելի եւ շնորհա-
կալութեան արժանի գործ մը կատա-
րած պիտի ըլլան:

Երգեցիկ խումբը իր առջի եռան-
գով կը շարունակէ յարատեւելու եւ
զգալի յառաջդիմութիւն մը ունեցած
է: Երգեցիկ խումբին քովիկը, ա-
նոր համանուն եւ օժանդակ մէկ
երկու օրինակելի քայլեր կատնուին,
որոնց վրայ կը գրեմ երբ որ առիթը
ներկայանայ:

Քանի որ տեղն է, կուզեմ «Անիի
առումը» ներկայացնող թատերասէր
ազնիւ երիտասարդներէն խնդրել,
որպէս զի ուրիշ ներկայացուած մը
տալու մասին արդէն իսկ ունեցած
փափաքնին զործնական հողի վրայ
դնեն վերջին ճիգ մը ընելով, որուն

ա՛յնքան անձկագին կը սպասէ հաս-
րակութեան կարեւոր մէկ մասը:

ՀՐԱՆՆԻ-ԺԻՐԱՅՐ

Լին ՄԱՍՍ, 10 Մարտ

Վերջնապէս բարեբաղդութիւն
ունեցայ Լինի հայոց կեանքը ու
սուսմասիբել. հոս կան մօտաու-
րապէս 200էն աւելի հայեր, ո-
րոնք մեծաւ մասամբ կօշիկ կը
շինեն (լիսր) ու առնոց ոգին,
բաղդատելով մի քանի քաղաք-
ներու, ինչպէս են, Լուզի, Նիւ-
րիփօրթ եւ այլն, շատ աւելի լա-
ւ է: Հոս կան երեք կազմակեր-
պութիւններ. Գաղտնիկական,
Հնչակեան եւ Մարտական, առնոց
վրայ աւելցունենք «Ժողովրդային
Միութիւն» Վերջինս գրեթէ
լուծուած է, իսկ միւսները կը
գործեն: Կայ խնդրուկ աղքատ
գրագրան մը, խումբ մը հայեր
ալ իրենց համար վարձու սրահ
մը ունին եւ քլիւպ շինած են,
ուր ամէն երեկոյ կերթան մարմ-
նամարզութիւն եւ զինավարժու-
թիւն կը սովորին. այս ամենագը-
վելին է, եւ Լինեցիք այս տեսա-
կէտէ ուրիշ քաղաքներէ բարե-
բախտ են: Կը յուսամ թէ որ
աւելի պիտի աճի այս քլիւպի
անդամներու թիւը եւ կը մաղթեմ
յարատեւութիւն եւ յաջողութիւն
երանի թէ ուրիշ քաղաքներ ալ
այս գովելի օրինակին հետեւին:

Այսօր ալ Հայ Յեղ. Գաղ. կօմի-
տէն գաղտնիկութեան տասնամ-
եակի առթիւ հրապարակային
ժողով մը ունեցաւ, որուն ներ-
կայ էին 180ի շուրջ հայոց քա-
կաններ. ժողովը բացուեցաւ
«ի զէն հայեր» երգը երգուելով,
յետոյ հրաւիրուեցաւ Պ. Մ. Մ. որ
կարգաց «Գրջակի անվերջ բա-
տեր» խմբագրականը. անկէ վերջ
Օր. Սրբուհի արտասանեց «Ո՞վ է
հայը» շատ յուզիչ շեշտերով,
որով ժողովրդին վրայ լաւ տպա-
ւորութիւն մը գործեց ու բուն
ժափահարութեան արժանացաւ,
յետոյ յաջորդեց Պ. Բ. Հ. կար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՕՖԷՍՐՈՐ ՄԻԼԻԿՈՎԻ ՅԱՐԻՆ
ՏՐՈՒԵԼԻՔ ԱՆԵՐՍԱԳԻՐԸ

Մեծութիւն,

Մենք ներքոյ ստորագրեալներս,
ձեր հաւատարիմ հպատակները, մեր
հայրենասիրական պարտականու-
թիւնն ենք համարում այս խոնարհ
աղերսագիրը ձեզ ներկայացնելու ու-
սանողական խոսովութիւնների տու-
թիւ: Մենք սրանով արասայտուած
ենք այն ամէնը, ինչ որ ցաւազնօրէն
հասունացել է ամէն մի գիտակից
կեանքով ապրող ուսուի հոգու մէջ:
Համալսարանական խոսովութիւն-
ները, որ քառասուն տարիի ի վեր

պարբերաբար կրկնուում են, ոչնչա-
ցրելու եւ դատարար (զէկլիասէ) են ա-
րել հազարաւոր երիտասարդներ, ո-
րոնք լի էին եռանդով եւ հայրենիքի
բարեբէն ու երջանկութեան ծառա-
յելու ձգտումներով:

Այս երեւոյթի պատճառները ա-
ւելի խորունկ են:

Այդ պատճառները կապ ունեն մեր
հասարակական եւ քաղաքական
կեանքի մի քանի ընդհանուր պայ-
մանների հետ, ու մասնաւորապէս յա-
րակից են մեր ակադէմիական միջա-
վայրի կազմակերպութեան պակասու-
թիւններին երկու տարի է որ Ձեր
Մեծութեան հիմնած յանձնաժողովի
միջոցաւ այդ պակասութիւնները լու-
սաբանուելին. սակայն այդ յանձնա-
ժողովի աշխատութիւնները այն գործ-
նական հետեւանքները չունենան,
ինչ որ իրաւամբ սպասուում էր:
Նրանք հասարակական կարծիքի առ-

ջեւ չը դրեցին քննադատելու հա-
մար, ոչ մասնուի միջոցով եւ ոչ ու-
րիշ կերպ: Այդ բոլորը կատարուելին
գիւտական միջոցով եւ բոլոր վա-
ւերաթղթերը թաղվեցին լուսաւորու-
թեան նախարարութեան մէջ, ուր
ձեր վեհանձն զիտաւորութիւնները
ոչ միայն թուլացրին, այլ եւ ոչնչա-
ցրին:

Փոխանակ ուղղամտութեամբ ձեր
այն ցուցմունքներին յարմարելու,
որոնք շօշափում էին ուսանողների
եւ պրօֆէսորների միջեւ աւելի խիտ
եւ աւելի հեղինակաւոր միութիւն
ստեղծելու խնդիրը, նախարարու-
թիւնը այդ բոլորը խեղ պրօֆէսոր-
ներից, որոնք իրենց արժանիքներով
եւ անձնութեամբ շատ մեծ ազ-
դեցութիւն պէտք է գործէին ուսա-
նողութեան վրայ: Խոսովութեան մաս-
նակցող ուսանողներին փոխանակ
բարոյական կարգապահութեան օ-

րէնքներին ենթարկելու, արտաք-
սեցին համալսարաններից եւ բարձ-
րադրոյն զպրօֆէսորներից, ու, ներքին
կարգապահութիւնը ապահովելու հա-
մար, միայն վերաստեւելների թիւը
աւելացրին. այսինքն համալսարա-
նական ուստիկանութիւնը զօրեղա-
ցրին:

1899ի Յուլիս 29ի առժամայ կար-
գադրութիւնները, որոնց նպատակն
էր նոր խոսովութիւնների առաջն առ-
նել, զինուորական ծառայութիւնով
սպանացին խոսովութեան պատճա-
ռաւ զարձող ուսանողներին: Այդ
միջոցը, որ այսօր գործադրվում է,
կարող է շարժումը խեղղել միայն ո-
րոշ ժամանակի համար: Բայց աչքի
թող չը պէտք է անել եւ յարոյական
հետեւանքները: Այդ միջոցը ճշնու-
մ է. բայց չէ նամուղում: Այդ միջոցով
խանգավաւ, աչնիւ զգայունը-
ներով եւ ձգտումներով ոգեւորված ե-

դառնալով «Գրոջակի Պանք Օթոմանի պահանջները» անկէ վերջ հրաւիրուեցաւ Սերուր անուն երիտասարդ մը և արտասանեց «Հայքս Հայաստանում» ծափահարութիւններ անոր հետեւեց Տկ. Մանուկեան, գեղեցիկ ճառ մը կարգաց և, ի միջի այլոց, բաւ թէ՛ արդի գործնական (Դայնակցական) յեղափոխութեան ուժ տալու ենք, հօրացնելու ենք որպէս զի մեր դատին յաղթանակը տանինք և օր առաջ Հայաստանի ներկայ անտանելի կացութեան վերջ մը տանք. թո՛ղ հայ յեղափոխականներու համար 1901 թիւը փառաւոր պատկով մը անցնի. բուն ծափահարութիւններով վարձատրուեցաւ յարգելի տիկինը, Յետոյ Յ. Բ. երգեց «Ով Միժեռնակը ու ասոր յաջորդեց Ս. Ռ. որ կարգաց «Գրոջակի Խանասորի արշաւանքը» ծափահարութիւններ կրկին Օր. Սրբուհի արտասանեց «Հայեր» ինչ անունք» և «Հիմի էլ լուհիք» երգէն վերջ, Պ. Ա. Վառճեան հրաւիրուեցաւ. ամբողջ ժամ մը խօսեցաւ և պարզեց ունկնդիրներուն թէ Արմենականներու ժամանակ անոնք ինչպէս ըմբռնած են յեղափոխութիւնը և այժմ ինչպէս ըմբռնած է Դաշնակցութիւնը. ցոյց սուա թէ ինչո՞ւ այն ատեն հոն մուտք ունէին, վաշխառուն, կղերը, եսամոլը և փառասէրները որոնց միմիայն տենջն էր սթոռ, քսակ և փորը, իսկ այժմ չկան ատոնք, որովհետեւ ավթոսի, քսակի և փորի տենջացողները Դաշնակցութեան ծրագրի և սկզբունքի մէջ իրենց փափաքները չեն կրնար իրագործել, ժողովը փակուեցաւ «Խլամական գոռ» վաշտերգը երգելով, ժողովուրդը մեկնեցաւ գոհ տպաւորութեան մը տակ :

ԾՊՏԵԱԼ

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ ԸՈՒՐՁԸ

Հայութիւնը իր կրած աղէտներէն գեռ յուշակորոյս ու երեւոն, նոր կնճիռներ, նոր ամպեր եկան կուտակուիլ յեղափոխական միջոցառումներով, սպաննալով անոր մաքուր և պաշտելի անունին դրօշմել սեւ բիծեր. շարք մը թրքամուլ-ցեցեր, ժողովուրդին առ դրոյթներէն օգտուելով՝ զայն շահագործելու համար՝ խուժեցին յեղափոխական ասպարէզը. Երեկի գողը, լրտեսը, յեղափոխական կուտակցութեան մը բեկորներուն վրայ, անոր անունով, հակայեղափոխական կուտակցութիւն մը հիմնելու ձեռնարկեց, նախկին երկրի ստուկը՝ ժողովուրդին առաջնորդելու հովեր առաւ, պարտեղել ջանալով իր կատարելաւ տղիտութիւնը հասարակական, պատմական և յեղափոխական խնդիրներու մէջ. վերջապէս, ինչ երկարեմ, երեկի անտարբերն ու թրքացածը՝ դարցաւ ազգասէր, ժողովուրդին յաւերուն վրայ ողբացող... Ահա այդ ատենէն սկսաւ բաց ի բաց հակայեղափոխական բրորականտը, Յուսահատ ու շուարած ամբոխին տրամադրութիւնները աչքի առնելու ունենալով, ստելու հայհոյելու, լալու, շողորթելու և... շորթելու սրտեմը առին պարագային համաձայն :

Բայց յեղափոխական գաղափարը անկեղծօրէն ժողովուրդին մէջ տարածելու ձգտող մէկ երկու սակաւթիւ թերթեր, աչակից ունենալով իրենց գաղափարակիցներու ստուար խումբ մը, չի թողուցին. որ յեղափոխութեան մաքուր անունն ու միջոցառումը պակասի. ու ընտանի էր՝ սկսաւ կռիւր՝ մաքուր յեղափոխական տարրին և յեղափոխական գիտակից տակ պահուելու թրքացասէրներուն մէջ :

Կամաց կամաց նորանոր յաջո-

ղութիւններ եկան պատկել ճշմարտութեան համար կուտակելու անկեղծ ջանքերը, Ամէն անոնք, որ քիչ թէ շատ յեղափոխական էին, ու կը հետեւէին կեղծ յեղափոխականներուն, շուտով տեսան ինկած ծուղակին, ու հեռացան... Հոն, առ ներած ու ցխտտ տեղը մնացին միայն անոնք, որոնք կը սիրեն արդէն ազատութիւնը... Իսկ ժողովուրդին միամիտ մէկ մասը միայն չի կրցաւ որոշ մեկնութիւն մը տալ առ երկու տարբերուն մէջ եղած կռիւներուն, մնաց շուարած, ստանց բռնելիք ճամբան որոշել կարենալու : Այդ ատենէն սկսաւ նաեւ, ժողովուրդին այդ անգիտակից մասը գիտակցութեան ճամբուն մէջ դնելու գործն ալ բարդուիլ փոքրաթիւ մաքուր մամուլին ուսերուն վրայ :

Ու մինչեւ հիմա կը շարունակուի կռիւն ու քարոզը՝ այն թափով ինչ թափով որ պէտքը պահանջուի :

Եւ սակայն գեռ կռիւի ճամբուն մէջ, այսօր յանկարծ միութարական երեւոյթի մը դէմ առ դէմ կը գտնուի յեղափոխական կուտուր մամուլը, նպաստաւոր նոր միջադէպ մը, եկաւ, եթէ ոչ լիովին գոնէ մասամբ թէթեւցնել յեղափոխական մամուլին վրայէն ծանր ու դժուարին աշխատութիւնը, եթէ մինչեւ հիմա հակայեղափոխական տարրին (Արքիաբական) և անոնց կուտքին կեղտերը մերկացնող օգտակար մամուլն էր, հիմա ատ բանը սկսած են ընել նոյնիսկ յեղափոխութիւնը հարուածող, հակայեղափոխական տարրն ու անոնց ճիւղը պաշտպանողներն ու քաշայերդողները : Կռիւր հիմա իրենց մէջն է : Առ մերկացումները մեղի համար այնքան նշանակութիւն չունին, որովհետեւ նորութիւն մը չեն անոնք մեզի համար, որովհետեւ մենք շարունակ ճանչցած ենք անոնց բա-

րոյականը և զգույսացուցած ժողովուրդը. առ մերկացումները ընող անձը... Պ. Ա. Չօպանեան — մինչեւ հիմա իրենց յարգածն ու պաշտածը ըլլալուն համար, անոր գրածները իրենց համար է որ ամենէն աւելի կարեւորութիւն ունի : Եւ եթէ Պ. Չօպանեանի գրածները ուրիշ տէսակէտով մը ալ աւելի նշանակելի է անոր համար է որ, մնացած միամիտներն ալ շատ յստակ գաղափար մը պիտի կազմեն իրենց նկարագրին վրայ :

Առ մերկացումներուն վրայ գրել խոստացուած է արդէն «Մարտուհի» մէջ. ես առանց նկատողութեան անելու թէ ինչ շարժառիթներէ առաջ եկած են անոնք — որոնց հրատարակումը որքան ուշ, այնքան դատապարտելի հանգամանք մը ունի և կասկածի տակ կը դնեն հրապարակողին անկեղծութիւնն ու սղգասիրութիւնը — աս ամենուն հետ մէկտեղ, աս նշանակելի միջադէպէն ետքն է որ, մնացած միամիտներուն անտարբերութիւնը դէպի յեղափոխութիւնը, և գիտակցաբար կամ անգիտակցաբար ստ կեղտին ետեւէն գնացողներու ընթացքը, շատ իրաւացի կերպով իրաւունք պիտի ունենաք դատապարտելու և ոճիրի կարգը դասելու :

Է՛ն յուսալից և է՛ն միութարական կէտը հոն է որ, յեղափոխական մամուլին քարոզները իրենց բարբարաւ ազդեցութիւնն ու արդիւնքը ունեցած են ժողովուրդին վրայ. հիմա ժողովուրդին այն մասը որ անտարբեր ու շուարած էր, աւելի քան երբէք իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է բուն գործին — յեղափոխութեան վրայ և սկսած է սպասուածէն աւելի թռիչքներ անել դէպի գիտակցութիւնը : Եւ ի՞նչ տարօրինակ ապուշութիւն, այս տեսակ պայմաններու մէջ երկրորդ կամ երրորդ կուտակցութիւն մը ստեղծելու գաղափարներ ալ ունեցողներ կան :

Հ.

Իրատարգները «գասալտար» կը լինեն, իսկ նրանց ծնողները յանկարծակի կը կորցնեն իրենց երկար տարիներով փայտայած յոյսերը :

Ուսանողներին միւս մասին այդ միջոցը սայտափ կազդի. նրանք կը գողան իրենց ապագայի վրա : Կարճը, այդ միջոցը ճնշում է մեր երիտասարդներին, նրանց մէջ խեղդում է ամէն գաղափարական ազնիւ տենջանք, իսկ նրանցից թոյլերին նետում է եսասէր և ցած ձգտումներին տիրապետութեան տակ, որոնք արդէն առանց այդ էլ թագաւորում են մեր սովորական ամբողջ կեանքի մէջ :

Այդպիսի միջոցներով ամբողջ սերունդներ կրթելը նշանակում է ազգային կեանքի մէջ ստեղծել և պահպանել այս ծանր և ժանտահոտ մթնոլորտը, որի մէջ միայն անկումը և

ապրկանութիւնը կարող են ծագել :

Այդ միջոցառումի ծանրութիւնը ճնշում է ոչ միայն երիտասարդութեանը, այլ և հասուն մարդկանց սերնդին :

Մի թէ կանոնաւոր է, երբ միապետական երկրի մէջ հաւատարիմ հպատակներին ձայնը չէ կարողանում վեհապետին հասնել : Սակայն, ներկայումս, այս խոնարհ աղերսագրի տակը ստորագրելն անգամ շատ մարդկանց աչքում քաղաքացիական քաջութեան եղակի մի գործ պէտք է երեւայ :

Ձեր հպատակները, փոխանակ օրինաւոր և պատուաբար կերպով իրենց պէտքերը եւ ներքին իրաւերը իրենց կայսրին յայտնելու՝ ստիպված են գաղտնի գործել, վախենալով որ ոստիկանութիւնը կը գայ և աղերսագիրը, նախքան Ձեր ձեռքը հասնելը, կը խլէ :

Մի քանի անհատներ, որոնք լիովին համաձայն են այս աղերսագրի մէջ արտայայտված գաղափարներին, անկասկած չը պէտք է ստորագրեն՝ հետեւանքներին վախենալով :

Այս պայմաններէ մէջ կեանքը սկսում է անտանելի դառնալ ամեն մի կենդանի և խղճամիտ մարդի համար : Ամեն տեղ թաղաւորում է շարագուշակ անզգայութիւնը, հանգչում է հետաքրքրութիւնը դէպի ամեն մի հասարակական երեւոյթ : Ու, ընկերական և քաղաքական կեանքի բոլոր խաւերի մէջ բացարձակապէս մարդկանց պակասութիւն է զգացվում :

Ուրեմն, Տէր, Ձեր վեհանձն նախաձեռնութեամբ վերջ գրէք իրերի այս դժուար կացութեանը խիստ միջոցները գաղափարեցնելով : Վստահութիւն ցոյց տւելք ձեր հաւատարիմ հպատակներին եւ թոյլ տւեցէք որ

ներկայումս խեղդված հասարակական կարծիքը ազատաբար արտայայտվի :

Համալսարանական անկարգութիւններն և ուսանողները գոհութեամբ կը վերագտնան իրենց դիտական զբաղմունքներին, երբ նրանց երիտասարդ հոգիները այլուս չեն յուզվի իրենց շրջապատող սխուր կեանքի տեսարանով, երբ, ուսումը աւարտելուց յետոյ, իրենց առջեւ կուենան հայրենիքի գործերին ազատ և արդիւնաւոր կերպով մասնակցելու կարողութեան տեսարանը :

ԹԱՆ

Վառնա . — Գ. Գալուստ Պողոսեան Վանցի .

Ձեր նամակը որ գրած էք Վանցի Պաղտիկի մասին անոր տեղական երկու թերթերու մէջ տպագրած նամակին առթիւ . չի պիտի տպագրենք . որովհետեւ «Տարածում» չի զիջանիր զբաղուիլ Պաղտիկներու նման մարդոցմով .

Ձեր ընտրած միջոցը այդ մարդու էութիւնը հասկցնելու համար շատ աղէկ է . բայց «Տարածում»-ի խմբագիրը կուզէ ինքզինքը «ազատ պահել այն պատիւէն» զոր պիտի պատճառեն ձեր հրատարած երկու «խմբագրապետները» իրենց ներկայութեամբ .

Խորագրութիւն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պօլսէն շատ ստոյգ աղբիւրէ մը կը տեղեկանանք թէ՛ Աեւոնդ եպիսկոպոս Նիշմանեան որ Հայաստանի կոտորածներուն ժամանակ Կարնոյ առաջնորդ էր և թրքական խժգժութիւններուն դէմ սաստկապէս բողոքած ըլլալուն համար իբրեւ պատիժ երուսաղէմի վանքը աքսորուած էր . վերջերս հեռագիր հեռագրի վրայ քաջելով Սալթանին և Մեծ Ապարգոսին ներում խնդրած է և աղաչած է որ ազատեն զինքը աքսորանքէ որոց փոխարէն զաղստի գործել յանձն կառնէ ի հաշիւ թուրք կառավարութեան .

Արդէն միեւնոյն եպիսկոպոսը Սալթանին յղած լեռնին առթիւ ալ շնորհատրական հեռագիր մը ուղղած է կայս . պալատ և իր խոնարհ ծառայութիւնները ու ստորուկ հոգին դրած է ի սպաս նորին վեհափառութեան .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թրքական Ասուր շոգենաւը որ նորակոչ զինուորներ Եմէն կը տանէր խորտակուեր է կարմիր ծովի մէջ . 17 հոգի խեղդուեր են .

— Մարտ 22ին վեց պետութիւններու դեսպանները Բարձրագոյն Դրան և յոյն դեսպանատունը հաղորդեր են իրենց որոշումը թուրքո-յունական հիւպատոսային պայմանագրութեան մասին .

Այդ որոշումով յունահպատակները Թուրքիոյ մէջ բոլոր այն արտոնութիւնները և առաւելութիւնները պիտի վայելեն . ինչ որ վերջին պատերազմէն առաջ կը վայելէին . Բարձրագոյն Դուռը շատ ալ գոհ չէ մնացած .

Բեթերսպուրկի մէջ սպաննելու փորձ եղած է և ներքին գործոց նախարար Սպիակինի դէմ . Վարչաւայի համալսարանի ունեւորներն ալ ուզեր են ցոյց մը ընել ինպաստ իրենց ընկերուս ուսանողներու .

Պելիտով քաղաքի մէջ . ընկերավարականի մը մահուան առթիւ . մեծ ցոյց մը տեղի ունեցեր է . հազարաւոր մարդիկն են ամբողջ գիշերը յեղափոխական «կեցցէ ազատութիւնը» երգը երգեր են .

— Բեթերսպուրկէն գերմանական թերթերուն կը հաղորդեն որ կրթական նախարարը սպաննող ֆարքովիչ մեծ անգործութեամբ լսեր է իր դատավճիռը . Դատավարութեան ներկայ եղեր են միայն 60 հոգի նախարարներէն և պետական խորհրդի անդամներէն . Հասարակութեան համար մուտքը արգելուած է եղեր .

— Ռուս կրթական նախարարութիւնը յանձնուած է Ժէնէրալ Վանովսկիի . Չարը հրովարտակին մէջ շեշտած է որ կրթական գործերուն մէջ մեծ սխալներ տեղի ունեցեր են և պէտք է անհրաժեշտ բարեփոխութիւնները մտցնել և կայսրը կը յուսայ որ Վանովսկի իր քաղաքական փորձառութեամբ և լուսաւորուած ոգիով պիտի կրնայ այդ բոլորը ընել .

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Պուլկար կառավարութիւնը որոշեց նախկին նախարարապետ հանգուցեալ Սթոյիլովի թաղման հանգէսը պատմութեան հաշուին կատարել . Պուլկարիոյ այդ վաղամեռիկ պետական մարդուն մահը զօրեղապէս ազդած է նոյն իսկ իր քաղաքական հակառակորդներուն վրայ .

Թաղման հանգէսը կատարուեր է կիրակի ցորեկ . ժամը երկուքին .

— Սօֆիայի հարցաքննիչ դատարարի հրամանաւ ձերբակալուեցան Մակեդոնական բարձրագոյն գամիթէի նախագահը Պ. Պօրիս Սարալովի . փոխ նախագահ Պ. Տավիտովի և միւս անդամները . Այդ բոլորն ալ դատապարտուած են Պուլքէի մէջ ի բացակայութեան . Միխալէսքոյի սպանման առթիւ . Հիմա ալ պոլիկար կառավարութիւնը պիտի հարցաքննէ ասոնք . հարցաքննութենէ վերջ . կարելի է որ երաշխաւորութեամբ ազատուին .

— Մակեդոնական բարձրագոյն կոմիտէի ձերբակալուած անդամները երաշխաւորութեամբ բոլորն ալ ազատուած են .

Անգլիական թերթերը կը հաղորդեն որ Չինաստանի կայսրը Մանչուրիոյ վերաբերեալ դաշնագրութեան մասին ձարի պատասխանած է որ . եթէ Չինաստանը այդ երկիրը կորսնցունէ . այն ժամանակ բոլոր պետութիւններն ալ պիտի բարկանան և Ռուսիոյ . օրինակին պիտի հետեւին . կայսրը ձարէն շեղմապէս կը խնդրէ որ այդ նահանգը Չինաստանի վերադարձնէ .

— Կըսուի թէ զօրավար Վալտերսէ Չինաստանի կայսեր հեռագիր մը ղրկած է . որով կը խնդրէ շտապել բանակցութիւնները վերջացնել . սրպէս զի կարելի ըլլայ գաշնակից զօրքերը ետ կանչել . որոնց մէջ կարգ պահպանելը գրեթէ անհնարին կը դառնայ .

— Իշխան Չինկ և Լի Հունկ Չանկ Չինական արքունիքէն խնդրած են Եւրոպացիներու կողմէն պատժելու պահանջուած պաշտօնեաներու ցանկը ընդունիլ .

— Ճարտնի մամուլը կառավարութեան խորհուրդ կուտայ Մանչուրի խնդրին հանդէպ կորովի գիրք բռնել .

— Բեթերսպուրկի Չինական դեսպանը կառքէն իջած միջոցին կաթուածահար եղեր է .

— Բեթերսպուրկէն Գերմանական թերթերուն կը հաղորդեն թէ Մանչուրիոյ մէջ ռուսական երկու գնտերու և քանի մը հազար Չինական կանոնաւոր զօրքերու միջեւ մեծ կռիւ մը տեղի ունեցեր է . Ռուսները քանի մը սպաննուածներ ունին և քանի մը վիրաւորեալներ . Չինացիները մեծ կորուստ ունին .

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Ժէնէրալ Պլոստ հրաման ստացեր է ընդունիլ այն զօրաբաժինի հրամանատարութիւնը . որուն հրամանատարը մինչեւ հիմա մէնէրալ Պակէնն էր . Այս զօրաբաժինը պիտի յարձակի Պօթայի վրայ . Կը յուսացուի թէ՛ Ժէնէրալ Պլոստ . որ շատ փորձուեր է լեւնաբնակ հնդկաստանցիներու դէմ մղած կռիւներու մէջ . Պօթան պիտի գերազանցէ .

— Պաշտօնապէս կը հաստատուի որ Տուէթ և Պօթա միացեր են . երկու պոէր զօրավարներուն թիւը 13000ի կը հասնի . երկուքը միասին կը պատրաստուին Ժէնէրալ Ֆրէնչի դէմ կռուելու .

— Քրիկէր նախագահի Ամբիկայ երթալու լուրը կը հաստատուի . սակայն ճամբորդելու օրը դեռ որոշուած չէ .

Յունաստանի կառավարիչ երկիրու իշխանը Կրէտէի արգարադատութեան նախարար Վէնէզէլոսը պաշտօնանկ ըլլեր է . որովհետեւ վերջինս . հակառակ եօրկիրու իշխանի . նախարարական խորհուրդին առաջարկած է Կրէտէանկախ իշխանութիւն հռչակել . իշխանի այդ քայլը ընդունելու թիւն գտած է թէ Աթէնքի և թէ Կրէտէի մէջ .

Ա Ն Գ Լ Ի Ա

Սալիզպրի ապաքինելու վրայ է .

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Նախարարապետ Վալտէք Բուսոյի վիճակին մէջ վոխորութիւն մը չի նկատուիր .

ՏՕԲԹ. ՍԻՄՈՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Ի ՖԻԼԻՊԷ

Մանկարար . կնախտաբոյժ և մասնագէտ միզային հիւանդութեան որ բուական ժամանակէ ի վեր Բարիկ կը գտնուէր վերոյիշեալ հիւանդութիւններու նորանոր դարմաններու ուսումնասիրելու համար . վերադարձած ու Ֆիլիպէ հաստատուած է պողոտային վրայ նամակատան ճիղղէմի փողոցին մէջ . Հիւանդ կընդունի ամեն օր ժամը 2—6 հինգ շաբթի օրերը միեւնոյն ժամերու միայն կրնայ ձրխարար կը դարձանուին . 5—5

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման . հասցէտման . նամակագրութիւն . հարսանեկան հրատարակիչ . մահադր .

Գիները յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ և կառ յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին .

ԹԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԷ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Sof. V. Snsnelkanskij և Ե. Թոփչեանցի

„Die sozial-ökonomisch Türcei“ Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի և ընդհանրապէս թուրքայի մասին . Գինը 2 մարկ ճանապարհածախով զրմի՛ Berlin, Verlagshandlung R. Prager, №W. 7

ОТГОВОРНИКЪ:

Д-ръ М.Х.Г.РДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.